

Հ Ո Ր Ե Լ Յ Ա Ն

ՄԱՔՐՈՒՀԻ Պ. ՅԱԿՈՒԲԵԱՆ

**ՌՈՒՐԵՐ ՀԱՏՏԷՃԵԱՆ՝ ՈՐՊԷՍ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ԵՒ
ՈՐՊԷՍ ՄԱՐԴ**

(Ռ. Հատտեճեանի ծննդեան 80-ամեակին առիթով)

Ազգերու պատմութեան մէջ ճակատագրական նշանակութիւն ունի հանճարեղ մարդոց յայտնութիւնը: Անոնցմով է որ կը բնորոշուին ազգերու մտաւոր ու հոգեկան գերազանց յատկութիւններն ու վեհագոյն տեսիլները: Անոնք են որ ճամփա կը հարթեն վերելքի եւ բարեկարգութեան բախտորոշ շրջաններու:

Այդ հանճարեղ մարդոց շքախումբին կը պատկանի Ռ. Հատտեճեան, «Մարմարայի» խմբագրապետը, մեծանուն գրագէտը, ներհուն մտաւորականը, որուն հետ մտաւորապէս երեսուն տարի է Վեր միեւնոյն երդիքին տակ, միեւնոյն նպատակին ծառայելու երջանկութիւնն ու պատիւը կը վայելեմ:

Շատեր կարդացած են եւ գիտեն թէ Ռ. Հատտեճեան ինչպիսի կարողութիւններով օժտուած գրագէտ մըն է, թէ ինչպիսի գործեր ստեղծած է, թէ ինչպիսի համայնքային ծառայութիւններ մատուցած է, բայց չեն կարծեր որ շատեր մօտէն ճանչցած ըլլան զինքը որպէս մարդ, որպէս խմբագրապետ, որքան կը ճանչնամ ես, որպէս իր անմիջական գործակիցը:

Ռ. Հատտեճեան ամէն բանէ առաջ «մա՛րդ» է՝ բառին իսկական առումով. ազնիւ մարդը, անշահախնդիր մարդը, խղճի ու մտքի տէր հաւասարակշռեալ մարդը, մարդկային հասարակ տկարութիւններէ ու թերութիւններէ ձերբազատուած բացառիկ մարդը:

Իր մօտ ամէնէն ակնբախ գիծը այլասիրութիւնն է: Իր խմբագրապետութեան շրջանի «Մարմարայի» 40 տարուան հաստափոր հաւաքածոները կը վկայեն թէ Հատտեճեան մեծ այլասէր մըն է: Ան միշտ կ'ուրախանայ ուրիշներու յաջողութիւններով, կը դրուատէ ու կը ծափահարէ ուրիշներու բարի գործերը: Նախանձի զգացումը բոյն չէ դրած իր սրտին մէջ: Ո՛չ մէկու նկատմամբ նախանձ կը սնուցանէ: Իր հոգեկան անկապտելի հարստութիւնն է որ զինքը կը մղէ ուրիշներու հանդէպ ազ-



նի ու բարի զգացումներ սնուցանելու:

Միշտ պատրաստ է ծափահարելու ուրիշներու յաջողութիւնները: Աննախանձ սիրով կը դրուատէ, կը խրախուսէ ամէն անոնք, որոնք հետամուտ են լավագոյն ձգտումներու: Իր նկարագրին անշեղ մէկ գիծն է այս:

Հատուէճեան միշտ կ'երգէ մարդոց հանդէպ զգացած իր սերը: Կը ջանայ արտայայտել իր անկեղծ համոզումը, թէ մարդիկ պէտք չունին զիրար կոխտուելու՝ բարձրանալու համար, այլ կրնան բարձրանալ ուրիշները բարձրացնել ջանալով: Ան մարդոց հանդէպ իր սերը միայն իր տողերով չէ որ կ'արտայայտէ, այլ կը ջանայ նաեւ կենդանի օրինակ մը հանդիսանալ ի՛ր իսկ կեանքով: Իր քարոզած սկզբունքին կիրարկողն է ան իրական կեանքի մէջ: Կը ջանայ միշտ բարձրացնել ուրիշները, ուրիշներու ձեռքէն բռնելով վեր տանիլ զանոնք: Եւ ատով իսկ արդէն ի՛նք կը բարձրանայ ամէնէն առաջ:

Ան միշտ համակրանք եւ գուրգուրանք ցոյց կուտայ երկրորդական, երրորդական գրողներու եւ գրասէրներու նկատմամբ: Համբերութեամբ եւ քաղաքավարութեամբ կը լսէ զանոնք, միջոց չի՝ դներ անոնց եւ իր միջեւ, կ'օժանդակէ անոնց եւ կը ջանայ զանոնք խանդավառել իրենց նախասիրութիւններուն մէջ:

Կը պատահի երբեմն որ իր այդ անօրինակ փութկոտութեան եւ համբերութեան դիմաց նեղսրտած՝ ըսեմ իրեն. «Անարժէք մարդոց չափէն աւելի արժէք կուտայք»: Ինք կ'ընդունի, որ այդպէս է, բայց երբեք կողմնակից չ'ըլլար կացինահարելու դիմացինին մէջ խանդավառութիւնը: Մարդասիրական զգացումներէ տարուած՝ միշտ կ'ուզէ քաջալերել դիմացինին մէջ տեսնուած բարի տրամադրութիւն մը:

Հատուէճեանի այս կեցուածքը բնականաբար ծնունդ կ'առնէ որքան իր համետութենէն, նոյնքան իր այն խանդավառ զգացումներէն, զոր ինք կը տածէ մեր մշակոյթին նկատմամբ:

Իր նկարագրին տարբեր մէկ գիծն է ուրիշներուն օժանդակելու, ուրիշներուն առաւելագոյն չափով օգտակար ըլլալու իր արտակարգ փութկոտութիւնը: Այս վարուելակերպը որ ցայտուն ապացոյցն է մարդկային վսեմ առաքինութեան մը, շատ անգամ վնասաբեր կ'ըլլայ իրեն: Ան իր այս բնաւորութեան պատճառով շատ անգամ խաղի կուգայ զինքը շահագործել ուզողներու կողմէ: «Բայց ինչո՞ւ ո՛չ ըսել չեմ զիտեր» կ'ըսէ ան տխրօրէն, ամէն անգամ որ յուսախաբութեան մատնուի իր բարի արարքին դիմաց չարը գտնելով: Եւ սակայն եւս վստահ գիտեմ որ ան երջանկութիւն եւ ուրախութիւն կը զգայ ուրիշներու հանդէպ ցոյց տրուած օժանդակութենէն եւ բարեկամութենէն: Ան չի՝ սիրեր վիրաւորել նոյնիսկ իր թշնամին, ատելալատ զգացումներ չի սնուցաներ զինքը անիրաւաբար զգետնել ջանացող իր հակառակորդին նկատմամբ, տա՛սն անգամ կը մտածէ իրեն դէմ գործուած անիրաւութեան մը պատասխանելէ առաջ:

Եթէ բանախօսութեան մը կամ յարգանքի խօսքի մը համար հրաւեր ուղղուի իրեն, առաջարկը կ'ընդունի առանց երկմտութեան: Եթէ պահանջուի որ ուսումնասիրութիւն մը կատարէ ուրիշի անունով կամ թարգմանութիւն մը ընէ, կը յօժարի անտրտունջ, խրախուսելու համար ուրիշները:

Այս բարի տրամադրությունը հիմնական գիծն է իր նկարագրին, նաև առանցքը՝ իր գրականության: Իր ամբողջ գրականությունը հիմնուած է բարիին ու ազնիւին վրայ: Դրական զգացումներու ջատագով մըն է ան: Իր գրիչը միշտ քարոզիչն է մարդու հոգին ազնուացնող, մարդուն հոգիին վեհութիւն շահեցնող ամէն բանի: Այդ քարոզչութիւնը արուեստական ու կեղծ դրոշմ մը չի կրեր իր վրայ: Ինքնաբոյս է եւ համոզկեր: Իր գրիչը ինքնաբերաբար կը հակի դէպի ազնիւր: Բարիին հաւատաւորն է ան: Գրական ինչ սեռ ալ մշակէ, գրութիւնը կ'եզրափակէ բարիին, ազնիւին, գեղեցիկին յաղթանակով:

Իր գլխաւոր առաքինութիւններէն մէկն է նաև իր ճշմարտախօսութիւնը: Սուտն ու կեղծիքը, լարծուն խօսքը, շահադիտական ընկալումներով իրականութիւնները չարափոխելու կամ չարաշահելու ձգտումները անընդունելի եւ պժգալի արարքներ են իրեն համար: Եթէ նկատի առնենք, որ հասարակ ամէն մարդու, բայց մասնաւորաբար լրագրող հրապարագրի մը գլխաւոր սկզբունքներէն մէկը պէտք է ըլլայ ճշմարտախօսութիւնը, կրնանք անվարան ըսել, թէ այդ առաքինութիւնը իր վստահագոյն մարմնաւորումը գտած է Հատտէճեանի թէ՛ անձին եւ թէ գրականութեան մէջ:

Այդ ճշմարտախօսութիւնն է որ տարիներու ընթացքին իր անուան շուրջ ստեղծած է վստահութեան ապահով գօտի մը, որ իր առաքինութեան պսակումը կը խորհրդանշէ:

Հատտէճեան երկար տարիներ շարունակ, գրագետի եւ հրապարակագրի իր կեանքին մէջ միշտ նախընտրած է եւ կը նախընտրէ խուսափիլ ամէն տեսակ բանավէճէ: Քաջ գիտնալով հանդերձ, որ ինքն իր զօրաւոր գրիչով կարող է իր հակառակորդը դիտապատ զգեսնել, ան չի փափաքիր մշակել բանավէճ կոչուած գրականութիւնը: Չի՛ սիրեր, որովհետեւ ան խղճի տէր մեծ մարդասէր մըն է, որ չ'ուզեր սպաննել իր դիմացինը: Իսկ եթէ հարկ ըլլայ անիրաւուած այս կամ այն անձը պաշտպանել կամ համայնքային կարելոր հարց մը արծարծել, ան չի վարանիր, չի խրտչիր եւ իր ուժեղ գրիչով կ'իջնէ հրապարակ քաջակորով մարտիկի մը նման, կատարելու՝ իր պարտականութիւնը: Ինքնապաշտպանութեան կամ իրեն դէմ եղած անիրաւութիւն մը հերքելու համար հագուադէպօրէն ան ձեռք կ'առնէ իր գրիչը: Եթէ քննադատութիւններ ընելու կարիքը զգայ, իր հօդուածները գրի կ'առնէ հաւասարակշռեալ ոճով, բարեկրթութեամբ, առանց վիրաւորական կամ անուանարկիչ արտայայտութիւններու:

Հատտէճեանի անհատականութեան մէջ ճշմարտախօսութեան եւ վստահելիութեան առաքինութիւններուն վրայ պէտք է անմիջապէս աւելցնել իր երկչտութիւնն ու համեստութիւնը: Երկու յատկանիշներ, որոնք երբեմն սխալ մեկնաբանութիւններու ծնունդ կուտան: Որոշ շրջանակներ, երբեմն Հատտէճեանի մօտ կը կարծեն գտնել ինքնահաւանութիւն եւ հպարտութիւն: Բազմաթիւ անգամներ ականջալուր եղած եմ հետեւեալ արտայայտութեան. «Պրն. Հատտէճեան, երբ ձեզի հետ առաջին անգամ հանդիպում ունեցայ, ձեզ շատ հպարտ ու ինքնահաւան մէկը կարծեցի»:

Անծանօթ անձերու վրայ ինքնահաւան ու հպարտ մարդու տպաւորութիւն ձգելու պատճառը իր երկչտութիւնն է պարզապէս: Մինչեւ այսօր, ան չէ կրցած բոլո-

րովին ձերբազատիլ իր այդ բնաւորութենէն: Ան միշտ կը խուսափի ուշադրութիւններու կեդրոն հանդիսանալէ: Եթէ սրահէ մը, հաւաքոյթ մը, եկեղեցիէ մը ներս մտնէ, իր միակ մտահոգութիւնը կ'ըլլայ մտնել աննշմար կերպով, առանց ուշադրութիւն գրաւելու: Իսկ եթէ նկատէ որ ուշադրութեան կեդրոն դարձած է, կը տագնապի, շփոթութեան կը մատնուի, կը շառագունի իր դէմքը: Մեծ նեղութեան կը մատնուի, երբ եկեղեցիի մը մէջ ուզեն զինքը առաջնորդել պատուոյ հիւրերու դասը, առաջին կարգերու վրայ: Իսկ գեղարուեստական ներկայացումներու պարագային, երբ ուրիշներու կարգին իրեն ալ տեղ մը վերապահուած ըլլայ առաջին նստարաններու վրայ, դարձեալ կը տագնապի, մինչեւ որ իր տեղը երթայ ու նստի: Ան թէև գիտակից է իր արժեքին, բայց ամէն գնով կը խուսափի ընելէ այնպիսի շարժում մը, որ պիտի մատնէ իր այդ ինքնագիտակցութիւնը:

Իր յատկանիշներէն մէկն ալ խանդավառութիւնն է: Իրականին մէջ ան շատ բան կը պարտի իր այդ խանդավառ բնաւորութեան: Գրականութիւն մշակել, հրապարակագրութիւն ընել, տպարան հիմնել, զիբք հրատարակել, ուրիշներու գրականութիւնը վերլուծել ու գովաբանել, հօդուածներ կամ թատերախաղեր թարգմանել. վերջապէս այդ բոլորը արդիւնք են իր մշտարժարձ ու մշտանորոգ խանդավառութեան:

Ան իր այս խանդավառութեան վնասաբեր արդիւնքներն ալ կը կրէ շատ յաճախ: Կը պատահի որ գրականութեան հմայքէն տարուած սկսնակներ կամ չափահասներ, իրենց հանդէպ ցոյց տրուած հետաքրքրութենէն ու գուրգուրանքէն շլանան, շփանան, եւ իրենց մրցակից նկատէն Հաստէճէանը: Այս երեւոյթը զինքը յաճախ կ'առաջնորդէ յուսախաբութեան ու սրտաբեկութեան: Բայց այս տրամադրութիւնը անսրբագրելի բարի թերութիւն մըն է իր մօտ: Ան քանիցս ճաշակելով հանդերձ իր այս բնաւորութեան դառնութիւնը, կը մնայ միշտ անդրդուելի՝ իր այս կեցուածքին մէջ:

Իր գրական եւ լրագրական ծովածաւալ աշխատանքները արդէն իսկ ցայտուն կերպով կը բացայայտեն այն անժխտելի իրողութիւնը թէ Հաստէճէան աշխատասիրութեան ախոյան մըն է բառին իսկական առումով: Ան կ'աշխատի մագոգի մը կանոնաւորութեամբ, արագօրէն, կարգապահութեամբ, հետեւողականօրէն, մեծ թափով: Միշտ կը պնդէ ու կը հաւատայ, որ դանդաղ աշխատանքը կը դանդաղեցնէ նաեւ ստեղծագործական թափը:

Ան իր գրութիւնները գրի կ'առնէ մէկ շունչով, կայծակնային արագութեամբ: Երբեք չի պատահիր որ համակարգչին առջեւ նստի եւ պահ մը մտածէ թէ ի՞նչ պէտք է գրել: Եւ կամ գրել սկսելէ վերջ երբեք վարանումներ, ընկրկումներ կամ ընդհատումի պահեր չ'ունենար: Իր մատները, հակառակ իրենց այդ արտակարգ արագութեամբ թափահարումին, կը դժուարանան յագեցնելու իր մտածումներուն հեղեղային պոռթկումները, կը դժուարանան հասնելու գետի նման հոսող իր մտածումները արձանագրելու: Իսկ գրութիւնը աւարտելէ ետք, ան իր գրածներուն մէջ մեծ սրբագրութիւններ ընելու կարիքը չի գգար: Որքան բժախնդիր է իր գրութիւններու որակին նկատմամբ, նոյնքան համակերպող է որեւէ սրբագրութեան եւ թելադրութեան

նկատմամբ: Դիրություններ կ'ընդունի բառի մը տեղ թելադրուած ուրիշ բառ մը: Եթէ առաջարկուի, որ նախադասութիւնը փոխէ, անմիջապէս ընթացք կուտայ:

Միշտ նկատի կ'առնէ կատարուած քննադատութիւն մը եւ կը ջանայ օգուտ քաղել անկէ: Իր հիմնական պնդումներէն մէկը հետեւեալն է. «Ես կրնամ սխալիլ, ուրիշներէն շատ բան ունիմ սորվելիք»: Ասիկա պէտք չէ ընդունուի որպէս համեստութեան արտայայտութիւն, այլ պէտք է ընդունուի խելացի ու հեռատես մարդու իրատեսութիւն: Ահա հո՛ս է իր մեծութիւնը:

Բնութեան սիրահար մըն է ան: Իր ամէնէն երջանիկ պահերը կ'ապրի բնութեան հետ գլուխ գլխի, վայելելով բնութեան բարիքները եւ արբենալով բնութեան հազարումէկ գեղեցկութիւններուն դիմաց: Իր ներշնչումներուն անսպառ աղբիւրն է բնութիւնը, որուն հետ գլուխ գլխի մնալ կը փափաքի ամէն անգամ որ խոկալու եւ ապրելու երջանկութիւնը զգալ ուզէ:

Միւս կողմէ սակայն այդ սէրը իր ներաշխարհին մէջ կը սնուցանէ մահուան տխուր անդրադարձում մը: Մահուան մղձաւանջը առկա՛յ է միշտ իր առօրեայ մտահոգութիւններուն, նաեւ գրականութեան մէջ: Որովհետեւ բնութեան սիրահար մարդը, նոյնիսկ բնութեան գեղեցկութեան մէջ՝ կը տեսնէ մահուան հեռապատկերը:

Հատուէն երբեք չ'արտօնէ որ գրագէտի իր դիմագծութիւնը քողածածկ մնայ հրապարակագրի, լրագրողի իր դիմագծութեան տակ: Միշտ կը ջղայնանայ, երբ իր մէջ առաջին հերթին՝ լրագրող մը տեսնեն, հակառակ որ ան լիովի ըմբռնած է թէ ի՞նչ է լրագրողի մը կոչումն ու պատասխանատուութիւնը:

Ան՝ գիտակից իր պարտականութեան, իր կարելիութիւններուն եւ ժամանակին ներած առաւելագոյն չափով, անձամբ ներկայ կը գտնուի գեղարուեստական հանդէսներու, կրօնական արարողութիւններու կամ Միրոյ Սեղանի հաւաքոյթներու: Շատ անգամ ան իր միակ հանգիստի օրն իսկ սիրով կը գոհէ հանրօգուտ ծառայութեան համար: Պարզ լուրէ մը, հարցազրոյցէ մը մինչեւ գեղարուեստական հանդէսի մը նկարագրականը, ան միշտ իր գրիչը կը գործածէ սովորականէն տարբեր, ընկալեալ կաղապարէ մը դուրս պոռթկացող ոճով մը: Ա՛յդ է պատճառը, որ ան միշտ կը փնտռուի նմանօրինակ հաւաքոյթներու ընթացքին: Կազմակերպիչները գիտեն որ եթէ Հատուէն ներկայ գտնուի, թերթը աւելի բաբախուն կերպով ու խորափափանց վերլուծումներով արձագանգ պիտի հանդիսանայ այդ ձեռնարկին: Ան՝ այդ պարզ նկարագրականներուն մէջ իսկ կը դնէ արտասովոր համեմ մը, գրագէտի ինքնաբուխ դրոշմ մը:

Պէտք է ընդգծել նաեւ թէ հայ մամուլի համար նախախնամական մեծ բարեբախտութիւն մը եղած է Հատուէնի նման մեկու մը ներկայութիւնն ու ծառայութիւնը, եթէ նկատի առնուի որ ան ստանալով բարձրագոյն ուսում, շաղախուած է փիլիսոփայական եւ հոգեբանական գիտութիւններով, անգլերէնով ու ֆրանսերէնով ծովածաւալ ընթերցումներ կատարած է, այդ լեզուներէն կայծակնային արագութեամբ թարգմանութիւն ընելու կարողութիւնն ունի, գեղարուեստի անխտիր բոլոր ճիւղերէն ալ կը հասկնայ, մանաւանդ որ ընդունակ է իւրայատուկ փիլիսոփայական

մտածումներ կատարելու:

Ի զուր չէ որ բազմաթիւ գրականագէտներ կամ հրապարակագիրներ «եզակի երեւոյթ» կոչած են Հատտէճեանի անհատականութիւնն ու գրական աշխատանքը: Ան իսկապէս եզակի է այն իմաստով որ ամբողջ մեր մամուլի ու գրական պատմութեան մէջ դժուար է գտնել ուրիշ անձ մըն ալ, որ իր վրայ մէկտեղած ըլլայ այսքան բազում յատկութիւններ: Եզակի է նաեւ այն իմաստով որ, դժուար է գտնել ուրիշ անձ մըն ալ որ իր կարելիութիւններէն այնքան բաժին հանած ըլլայ հեղինակներու եւ արուեստագէտներու, որքան բաժին կը հանէ ինք: Ի՛նչ մեղք որ կարելի չէ ըսել որ բոլոր այդ արուեստագէտները գիտեն պատշաճ առիթով փոխադարձել այն սերն ու յարգանքը, զոր Հատտէճեան ցոյց տուած է իրենց նկատմամբ: Անոնցմէ ոմանք, մանաւանդ երիտասարդներ, գաղափար իսկ չունին թէ իրենց համար ի՛նչպիսի պատիւ մըն է Հատտէճեանի նման մեկու մը կողմէ ցուցաբերած ուշադրութիւնն ու գնահատանքը:

Հատտէճեան՝ որպէս հայ գրող եւ լրագրող, իր ընթերցողներուն մօտ միշտ կը ջանայ քաջալերել հայերէն լեզուի եւ մշակոյթի նկատմամբ հաւատարմութիւնն ու հետաքրքրութիւնը: Ան ամբօրէն կառչած է հայերէն լեզուին եւ մշակոյթին: Տխրօրէն կը հետեւի լեզուի եւ մշակոյթի անտեսումին ու լքումի ողբերգութեան:

Կարելի է տակաւին ըսել որ գերզգայուն հոգի մըն է ան: Զգայնութիւնը, մտածելու արտակարգ կարողութեան առընթեր, Հատտէճեանին ամէնէն հիմնական յատկանիշն է եւ ան, փիլիսոփայութենէ դուրս, իր գրականութեան մարդասիրական ամբողջ դիմագծութիւնը կը պարտի իր այդ զգայնութեան:

Այս բոլոր վկայութիւնները արձանագրելէ ետք, կը հաւատամ որ իմ գրիչս անգոր կը մնայ նկարագրելու այն եզակի մարդը, որ է Ռ. Հատտէճեան: Մեր ժամանակակից մշակութային կեանքին համար որքա՛ն կարեւոր է անոր ներկայութիւնը եւ մեր ժամանակակիցներուն համար ալ ինչպիսի՛ բախտաւորութիւն մըն է ունենալ անոր պէս անձ մը որպէս մամուլի ու գրչի մարդ: